«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
2019թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա վերաբերյալ

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Տարեկան ֆինանսական հաշվետվություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

Խորհրդի կազմ	3
Անկախ աուդիտորի եզրակացություն	4
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ	11
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Կազմակերպության գտնվելու վայրը	ՀՀ, Երևան, Արին Բերդի փողոց 3-րդ նրբանցք, 3-րդ շենք
Իրավական ձևը	Փակ բաժնետիրական ընկերություն
Հիմնական գործունեության նկարագիրը	Ջերմաէլեկտրակենտրոնի միջոցով բնական գազից էլեկտրաէներգիայի արտադրություն

Խորհրդի կազմ

Համլետ Բատիկյան	ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար, խորհրդի նախագահ
Սերոբ Հունանյան	ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի օգնական
Արմեն Մելիք-Իսրայելյանը	ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետական բաժնեմասի կառավարման վարչության պետ
Ստեփան Պետրոսյանը	ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից-անդամ (ֆիզիկա մաթեմատիկական գիտությունների դոկտոր)
Նատալյա Սարջանյան	«Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ կորպորատիվ և հասարակայնության հետ կապերի դեպարտամենտի պետ

Հեռ.՝+37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ղեկավարությանը

Եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, բացառությամբ այս եզրակացության "Վերապահումով կարծիքի հիմքեր" բաժնում ներկայացված հարցերի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմքեր

Ընկերությունը 2010թ.-ից շահագործում է նոր ջերմաէլեկտրակենտրոն, որի հաշվեկշռային արժեքը 31.12.2019թ. -ի դրությամբ ներկայացված է 107 միլիարդ դրամով (ծնթ. 5.բ): Կայանի մաշվածությունը հաշվարկվում է ուղիղ-գծային մեթոդով՝ 40 տարի օգտակար ծառայության ժամկետով, չնայած նրան, որ կայանի նշանակալի որոշ բաղկացուցիչ մասեր ունեն ավելի կարճ օգտակար ծառայության ժամկետ: Մեր կարծիքով, այս մոտեցումը չի համապատասխանում "Հիմնական միջոցներ" ՀՀՄՍ 16-ի պահանջներին: Հաշվի առնելով, ենթակայանի տեխնիկական առանձնահատկությունները, մենք ինքներս անկարող ենք հաշվարկել նոր ենթակայանի գծով մաշվածության գումարը համաձայն ՀՀՄՍ 16-ի, հետևաբար չենք կարող գնահատել լրացուցիչ հաշվարկվելիք մաշվածության գումարի ազդեցությունը հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի, հետաձգված հարկային ակտիվի մնացորդների և ֆինանսական արդյունքի վրա:

31.12.2019թ. -ի դրությամբ Ընկերության պաշարներում առկա են հետագա օգտագործման համար ոչ պիտանի 1 միլիարդ դրամ ընդհանուր արժեքով պաշարներ (ծնթ. 6), որոնց գծով հաշվետու ամսաթվով չի գնահատվել նրանց իրացման զուտ արժեքը, և պաշարների արժեքը չի նվազեցվել մինչև իրացման զուտ արժեք: Մեր կարծիքով, այս մոտեցումը չի համապատասխանում "Պաշարներ" ՀՀՄՍ 2-ի պահանջներին: Հաշվի առնելով, պաշարների տեխնիկական առանձնահատկությունները, մենք ինքներս անկարող էինք գնահատել նրանց իրացման զուտ արժեքը, հետևաբար անկարող էինք գնահատել արժեզրկման գումարի ազդեցությունը պաշարների, հետաձգված հարկային ակտիվի մնացորդների և ֆինանսական արդյունքի վրա:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության "Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար" բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Անընդհատության հիմունքին վերաբերող էական անորոշություն

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 3.3-ի վրա, որտեղ նշվում է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության կուտակված վնասը կազմել է 17.5 միլիարդ դրամ (31.12.2018թ.՝ 19.3 միլիարդ դրամ):
Ինչպես նաև նշված է վերոհիշյալ ծանոթագրությունում, այս դեպքերը և իրավիճակները, ի թիվս այնտեղ նշված այլ հարցերի, ցույց են տալիս, որ առկա է էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հարցի կապակցությամբ:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:
Կառավարման լիազոր անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում,

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31.12.2019թ. *հազար դրամ*	31.12.2018թ. *հազար դրամ*
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	5	123,882,673	130,617,644
Ոչ նյութական ակտիվներ		7,409	9,865
Հետաձգված հարկային ակտիվ	16	675,613	1,745,289
		124,565,695	132,372,798
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	6,286,246	7,064,124
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	6,888,031	7,757,606
Դրամական միջոցներ	8	11,035,643	3,914,547
		24,209,920	18,736,277
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		148,775,615	151,109,075
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	9.1	1,852,615	1,852,615
Էմիսիոն եկամուտ	9.2	11,264,865	11,264,865
Վերագնահատման պահուստ	9.4	7,566,253	8,126,425
Կուտակված վնաս		(17,526,710)	(19,348,969)
		3,157,023	1,894,936
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	10	111,709,671	115,060,876
		111,709,671	115,060,876
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	10	9,700,867	9,900,731
Հետաձգված եկամուտ		49,051	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	23,917,545	24,252,532
Շահութահարկի գծով պարտավորություն	16	241,458	-
		33,908,921	34,153,263
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓ. ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		148,775,615	151,109,075

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2020թ. ապրիլի 30-ին: Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ալիսա Հարությունյան
Գլխավոր տնօրենի պ/կ

Գարրի Ախոյան
Հաշվապահական ծառայության ղեկավար

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2019 հազար դրամ	2018 հազար դրամ
Հասույթ	12	74,975,272	94,238,252
Վաճառքի ինքնարժեք	13	(68,789,792)	(87,065,390)
Համախառն շահույթ		***6,185,480***	***7,172,862***
Այլ եկամուտ		75,740	705,240
Վարչական ծախսեր	14	(755,789)	(911,980)
Այլ ծախսեր	15	(2,369,638)	(3,400,703)
Հիմնական միջոցների օտարումից օգուտ/(վնաս), զուտ		1,514	752
Ակտիվների արժեզրկումից վնաս		(121,907)	(59,582)
Գործառնական գործունեությունից շահույթ		***3,015,400***	***3,506,589***
Ֆինանսական եկամուտ		1,035,074	574,458
Ֆինանսական ծախսեր		(1,456,817)	(1,114,075)
Փոխարժ. տարբ. օգուտ/(վնաս), զուտ		(20,436)	(1,907,110)
Շահույթ մինչև հարկումը		***2,573,221***	***1,059,862***
Շահութահարկի գծով ծախս	16	(1,311,134)	(1,019,002)
Տարվա զուտ շահույթ		***1,262,087***	***40,860***
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Ընդամենը համապարփակ արդյունք		1,262,087	40,860

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2020թ. ապրիլի 30-ին: Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ալիսա Թադևոսյան
Գլխավոր տնօրենի պ/պ

Գարրի Ախոյան
Հաշվապահական ծառայության ղեկավար

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վերագնահատման պահուստ	Կուտակված վնաս	Ընդամենը
	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ
Մնացորդն առ 1 հունվարի 2018թ.	10,424,652	2,692,828	8,739,014	(20,002,418)	1,854,076
Տարվա շահույթ	-	-	-	40,860	40,860
Բաժնետոմսի անվանական արժեքի նվազեցում	(8,572,037)	8,572,037	-	-	-
Վերագնահատման պահուստից տեղափոխում	-	-	(612,589)	612,589	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2018թ.	1,852,615	11,264,865	8,126,425	(19,348,969)	1,894,936
Տարվա շահույթ	-	-	-	1,262,087	1,262,087
Վերագնահատման պահուստից տեղափոխում	-	-	(560,172)	560,172	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2019թ.	1,852,615	11,264,865	7,566,253	(17,526,710)	3,157,023

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2020թ. ապրիլի 30-ին: Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գլխավոր տնօրենի պ/կ

Գարրի Ախոյան
Հաշվապահական ծառայության ղեկավար

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	2019 հազար դրամ	2018 հազար դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Իրացումից մուտքեր	37,427,520	65,751,619
Մատակարարներին վճարումներ	(22,183,326)	(51,323,187)
Աշխատակիցներին վճարումներ	(533,546)	(559,456)
Հարկերի վճարում	(2,505,153)	(602,374)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***12,205,495***	***13,266,602***
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Տրամադրված փոխառությունների մարում	-	24,288
Ավանդներից տոկոսային մուտքեր	958,015	574,458
Հիմնական միջոցների դիմաց վճարումներ	(898,064)	(15,703,481)
Հիմնական միջոցների օտարումից մուտքեր	5,150	1,740
Ոչ նյութական ակտիվների դիմաց վճարումներ	(1,364)	(1,711)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***63,737***	***(15,104,706)***
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	272,329	7,086,865
Վարկերի և փոխառությունների մարում	(3,947,057)	(6,059,095)
Վճարված տոկոսներ	(1,476,561)	(1,272,936)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***(5,151,289)***	***(245,166)***
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	***7,117,943***	***(2,083,270)***
Փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների վրա	9,405	(37,990)
Փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	(6,252)	(37,108)
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի	***3,914,547***	***6,072,915***
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	***11,035,643***	***3,914,547***

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2020թ. ապրիլի 30-ին: Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Արիան Ասատրյան
Գլխավոր տնօրենի պ/կ

Գարրի Ախոյան
Հաշվապահական ծառայության ղեկավար

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

1. Ընդհանուր տեղեկություններ	12
2. Պատրաստման հիմունքներ	13
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ	14
4. Նշանակալի դատողությունների, գնահատումներ և ենթադրություններ	20
5. Հիմնական միջոցներ	22
6. Պաշարներ	27
7. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	28
8. Դրամական միջոցներ	28
9. Սեփական կապիտալ	29
10. Վարկեր և փոխառություններ	30
11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	32
12. Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	32
13. Վաճառքի ինքնարժեք	34
14. Վարչական ծախսեր	36
15 Այլ ծախսեր	36
16. Շահութահարկ	36
17. Գործարքներ կապակցված կողմերի հետ	38
18. Ֆինանսական գործիքներից բխող ռիսկեր	39
19. Պայմանական ակտիվներ և պարտավորություններ	43
20. Կապիտալի կառավարում	43
21. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր	44
22. Իրական արժեքի չափման բացահայտումներ	45

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Կազմակերպությունը

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ընկերությունը հիմնադրվել է 1963թ: «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերությունը (Ընկերությունը) ստեղծվել է 1997թ.:

Ընկերության հիմնական գործունեությունն է՝

- էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրություն և վաճառք,
- բնական գազի և էլեկտրաէներգիայի ներմուծում և արտահանում:

Ընկերության գործունեությունը՝ ներառյալ սակագնային քաղաքականությունը, կարգավորում է Հայաստանի Հանրապետության Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովը:

Երևանի ՋԷԿ-ի թվով յոթ տուրբոագրեգատներից առաջինը՝ 50 ՄՎտ հզորությամբ առաջին տուրբինային տեղակայանքը շահագործման է հանձնվել 1963թ., իսկ վերջինը՝ 1967թ.:

Շահագործման մեջ լինելով ավելի քան 40 տարի՝ էլեկտրակայանի ագրեգատները և օժանդակ սարքավորումները ենթարկվել են ֆիզիկական և բարոյական էական մաշվածության՝ սպառելով իրենց աշխատանքային նորմատիվային պաշարները, որի հետևանքով բնականաբար զգալիորեն ընկել է կայանի շահագործման հուսալիությունը և էլեկտրական ու ջերմային էներգիայի արտադրության արդյունավետությունը:

2005թ. մարտի 29-ին ՀՀ կառավարության և միջազգային համագործակցության Ճապոնիայի բանկի (ՄՀՃԲ) միջև ստորագրվել է վարկային պայմանագիր «Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի (էներգաբլոկ) նախագծի» իրականացման վերաբերյալ: Նշված համաձայնագրի հիման վրա ՄՀՃԲ-ն ՀՀ կառավարությանը տրամադրվել է վարկ արտոնյալ պայմաններով՝ հատկացնելով 26,409 միլիոն ճապոնական իեն: Նոր գործարանի շինարարությունը սկսվել է 2006թ. և ավարտվել է 2010թ.: Այն շահագործման է հանձնվել 2010թ. ապրիլին:

Ներդրվող նոր տեխնոլոգիաների շնորհիվ բարձրացել է կայանի ընդհանուր օգտակար գործողության գործակիցը՝ հասնելով մոտ 70%-ի, զգալիորեն նվազել է արտանետումների մակարդակը, ինչպես նաև ջրի ծախսը՝ ավելի քան 3 անգամ:
Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2019թ. կազմել է 224 մարդ (2018թ.՝ 230 մարդ):

Ընկերության կանոնադրության փոփոխությունը պետական ռեգիստրում գրանցվել է 2006թ. սեպտեմբերի 8-ին, գրանցման համարը՝ 269.070.00255, վկայականը՝ 01 Ա 004948:

Ընկերության գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0053 ք. Երևան, Արին Բերդի փողոց 3-րդ նրբանցք, 3-րդ շենք:
Հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 02205028:

1.2. Կանոնադրական կապիտալ

Ընկերության միակ բաժնետերը հաշվետու ամսաթվին և նախորդ տարիներին Հայաստանի Հանրապետությունն է:
Ընկերության կանոնադրական կապիտալը 31.12.2019թ. դրությամբ կազմել է 1,852,615 հազար դրամ (31.12.2018թ.-ին՝ 1,852,615): Այն բաղկացած է 2,273,147 հատ հասարակ անվանական բաժնետոմսերից, յուրաքանչյուրի անվանական արժեքը՝ 815 դրամ (31.12.2018թ.-ին՝ 815 դրամ):

2. Պատրաստման հիմունքներ

2.1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմունք

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ-ներ) պահանջների համաձայն: ՖՀՄՍ-ները Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից հրապարակված ստանդարտներն ու մեկնաբանություններն են: Դրանք բաղկացած են՝

- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից,
- Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներից,
- Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի (ՖՀՄՄԿ) մեկնաբանություններից և
- Մեկնաբանությունների մշտական կոմիտեի (ՄՄԿ) մեկնաբանություններից:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 3-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 4-ում:

2.2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

2019թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ.

- ՖՀՄՍ 16 "Վարձակալություն";
- ՖՀՄՍ 23 " Շահութահարկի գծով անորոշություն":

Նշվածներից ոչ մեկը չի ունեցել նշանակալի ազդեցություն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

2.3. Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՍ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Առկա չեն նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել և որոնք կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Ընկերության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

3.1 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ ազգային արժույթն է՝ Դրամը: Այն հանդիսանում է նաև Ընկերության այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը՝ հազարների ճշտությամբ:

3.2. Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ հետևյալ հոդվածների.

- Վերագնահատված արժեքով չափվող հիմնական միջոցներ (ծնթ. 4).

3.3 Անընդհատության սկզբունք

Ընկերությունը վերջին տարիներին ունեցել է ֆինանսական դժվարություններ, որոնց արդյունքում հաշվետու ամսաթվի դրությամբ կուտակված վնասը կազմում է 17,526,710 հազար դրամ (31.12.2018թ.-ի դրությամբ՝ 19,348,969 հազար դրամ):

Ընկերության ղեկավարությունը մշակել և հետևողականորեն իրականացնում է ֆինանսական առողջացման միջոցառումների պլան, կատարում է լիկվիդայնության մշտական վերահսկողություն և կառավարում:
2020թ.-ին Ընկերությունը նախատեսում է իրականացնել Նախատեսվում է իրականացնել GT13E2 MXL2 upflow կոմպրեսորների արդիականացում՝ հզորության ավելացման միջոցով՝ պահպանելով էներգաբլոկի ՕԳԳ-ն և միջնորոգումային ժամկետները: Ներդրումային ծրագիրը նախատեսվում է իրականացնել Ընկերության սեփական միջոցների հաշվին:

- Ներդրումային ծրագրի հիմնական ուղղություններն են՝
  - ✓ գործող կայանի սերնդափոխում,
  - ✓ էլեկտրաէներգետիկական համակարգի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացում:
- Ներդրումային ծրագրի թիրախն է
  - ✓ էլեկտրական էներգիայի օգտակար առաքման ավելացումը, քանի որ ՀՇԳՑ էներգաբլոկը հանդիսանում է էլեկտրաէներգետիկական համակարգում գործող ջերմաէլեկտրակայաններում ամենաշահավետը, ուստի վերակառուցման արդյունքում հզորության ավելացումը կնպաստի համակարգում ցածր սակագնով էլեկտրական էներգիայի ծավալների ավելացմանը:
  - ✓ Արդիականացումից հետո էներգաբլոկի մինչև 233.6 ՄՎտ հզորության և էլեկտրական էներգիայի օրական միջին օգտակար առաքման ավելացման դեպքում ներքին և արտաքին շուկաներում այս էներգաբլոկի արտադրած էլեկտրաէներգիան կդառնա մրցունակ, ինչն էլ իր հերթին կնպաստի ԻԻՀ էլեկտրական էներգիայի արտահանման ծավալների ավելացմանը1:
  - ✓ ԻԻՀ էլեկտրական էներգիայի արտահանման ծավալների ավելացում:
- Բեռնվածքի կրման ժամանակացույցը, որը 2019թ.-ի դեկտեմբերին հաստատվել է ՀՀ Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովի (ՀԾԿՀ) կողմից, և համաձայնեցվել էլեկտրաէներգետիկական Համակարգի Օպերատորի (ԷՀՕ) հետ:
- Ընկերությունը նախատեսում է 2024թ.-ին իրականացնել էներգաբլոկի և շոգեգազային ցիկլով աշխատող գազատուրբինի նորոգում, որի արդյունքում նշանակալի կբարելավեն արտադրատեխնիկական ցուցանիշները: Այդ նպատակով Ընկերությունը ներդնելու է

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Համաձայն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև 2016թ. մայիսի 12-ին ստորագրված 8615-AM Վարկային համաձայնագրի 2-րդ բաժնի C.2.a.(vi) կետի, և ՀՀ Ֆինանսների նախարարության և Ընկերության միջև 2016թ. հունիսի 14-ին ստորագրված Ենթավարկային համաձայնագրի 4.14 կետի, Ընկերությունը պարտավորվել է չկրել որևէ ծախս, պարտք կամ պարտավորություն, և չտրամադրել վարկեր կամ դրամաշնորհներ Ընկերության հիմնական գործունեության՝ էներգիայի արտադրության հետ չկապված նպատակների համար:

Մեր կարծիքով, 2019 դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Ընկերությունը պահպանել է նշված վավերապայմանը:

30 ապրիլի 2020թ.
«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար

31.12.2019թ.-ին առկա 10,900,000 հազար դրամ բանկային ավանդը, և լրացուցիչ առևտրային վարկեր չի ներգրավի:

2020թ.-ի գարնանը COVID-19-ի տարածմամբ պայմանավորված տնտեսության ակտիվության նվազման արդյունքում նվազում է նաև էլեկտրաէներգիայի պահանջարկը և ներքին և արտաքին շուկայում: Ծնթ. 21-ում ներկայացված է այս հանգամանքի նկարագրությունը և նրա հնարավոր բացասական ազդեցությունը Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

Ընկերության ղեկավարությունը, հիմնվելով կատարված դատողությունների վրա, ունի հիմնավորված ակնկալիք, որ Ընկերությունը կարող է շարունակել իր գործառնական գործունեությունը տեսանելի ապագայում: Ուստի Ընկերությունը շարունակում է որդեգրել անընդհատության սկզբունքը իր ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով:

3.4 Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները եւ պարտավորությունները վերագնահատվում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ որոշվող դրույքաչափերով: Չմարված դրամային ակտիվների եւ պարտավորությունների վերագնահատման արդյունքում առաջացող փոխարժեքային տարբերությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

3.5 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները, որոնք օգտագործվում են ծառայությունների մատուցման կամ վարչական նպատակներով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցների իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է զուտ արժեքը: Վերագնահատումներն իրականացվում են բավարար պարբերականությամբ այնպես, որ հաշվեկշռային արժեքն էականորեն չտարբերվի հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքից:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Վերագնահատումից աճը ճանաչվում է կուտակված շահույթում Ընկերության կողմից ակտիվի օգտագործմանը զուգահեռ: Կուտակված շահույթում ճանաչված վերագնահատումից աճն իրենից ներկայացնում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված

մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրահաշվարկված մաշվածության տարբերությունը: Վերագնահատված հիմնական միջոցի միավորի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճը ուղղակիորեն վերագրվում է կուտակված շահույթին:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռ անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառվում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացվում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

3.6 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

3.7 Պաշարներ

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:
Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է կշռված միջին բանաձևով:
Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, մասնավորապես ավտոմեքենաների ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:
Պաշարները ներկայացված են ինքնարժեքի և հնարավոր իրացման զուտ արժեքի նվազագույնով:
Պաշարների իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

3.8 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:
Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատույցներով փոխանցվում են երրորդ կողմին:
Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն,

չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը իր ֆինանսական ակտիվները իրենցից ներկայացնում են ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Այս ակտիվները հիմնականում առաջանում են հաճախորդներին ապրանքների եւ ծառայությունների մատուցումից (օրինակ `առեւտրային դեբիտորական պարտքեր), ինչպես նաև ներառում են այլ ֆինանսական ակտիվներ, որոնց նպատակն է այդ ակտիվները պահել, պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով, իսկ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը իրենցից զուտ ներկայացնում են մայր գումարի և տոկոսների վճարումներ: Դրանք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, գումարած գործարքների գծով ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման կամ թողարկման հետ, եւ հետագայում դրանք չափվում են ամորտիզացված արժեքով, օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ նվազեցման արժեզրկման պահուստը:

Ընթացիկ եւ ոչ ընթացիկ առեւտրային դեբիտորական պարտքերի գծով վճարունակության ակնկալվող կորուստները գնահատելու նպատակով կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումը՝ օգտագործելով ողջ ժամկետի համար վճարունակության ակնկալվող կորուստների գնահատում: Այս գործընթացում գնահատվում է առեւտրային դեբիտորական պարտքերի չվճարման հավանականությունը: Այդ հավանականությունը, այնուհետեւ, բազմապատկվում է կանխատեսվող կորստի գումարի չափով՝ առեւտրային դեբիտորական պարտքերի ողջ ժամկետի գծով ակնկալվող կորստի գնահատման նպատակով: Զուտ արժեքով ներակայացվող առեւտրային դեբիտորական պարտքերի գծով, այդպիսի պահուստները հաշվառվում են առանձին հաշվով՝ ներառելով որպես իրացման ինքնարժեք համապարփակ արդյունքի հաշվետվությունում: Առեւտրային դեբիտորական պարտքերի անհավաքելիության հաստատման դեպքում, ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը հաշվանցվում է այդ ակտիվի գծով ձևավորված պահուստի հաշվին:

Կապակցված կողմերից դեբիտորական պարտքերի եւ կապակցված կողմերին տրամադրված փոխառությունների արժեզրկման պահուստները ճանաչվում են վճարունակության կորուստների ակնկալվող մոդելի հիման վրա: Պահուստի գումարի որոշման մեթոդաբանությունը հիմնված է այն հանգամանքի վրա, թե ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչուման պահից հետո արդյոք եղել է վճարունակության ռիսկի զգալի աճ: Այն ակտիվների համար, որոնց սկզբնական ճանաչուման պահից հետո չի եղել է վճարունակության ռիսկի զգալի աճ, ճանաչվում է վճարունակության ռիկսի տասներկու ամսվա ակնկալվող կորուստները՝ համախառն տոկոսային եկամտի հետ միասին: Այն ակտիվների համար, որոնց վճարունակության ռիսկը զգալիորեն աճել է, ճանաչվում է ողջ ժամանակաշրջանի համար վճարունակության ռիսկի ակնկալվող կորուստ՝ համախառն տոկոսային եկամտի հետ միասին: Այն ֆինանսական ակտիվների համար, որոնք դիտարկվում են որպես վճարունակությունը վատթարացած, ճանաչվում է ողջ ժամանակաշրջանի համար վճարունակության ռիսկի ակնկալվող կորուստ՝ զուտ արժեքի վրա հաշվարկված տոկոսային եկամտի հետ միասին:

Ընկերության ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ներառում են առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքեր, կապակցված կողմերին տրամարդված փոխառությունները, ինչպես նաեւ դրամական միջոցները եւ դրանց համարժեքները: Դրամական միջոցները եւ դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները և ցպահանջ ավանդներ բանկերում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառվում են վարկերը և փոխառությունները և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 10, 11-ում:

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացիոն արժեքով:

3.9 Արժեզրկում

Ընկերության հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա՞ է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են այդ ակտիվի (կամ ակտիվների խմբի) փոխհատուցվող գումարները և համեմատվում հաշվեկշռային արժեքի հետ: Եթե գնահատված փոխհատուցվող գումարը փոքր է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գնահատված փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Նմանապես, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատվում է պաշարների արժեզրկված լինելը՝ պաշարի յուրաքանչյուր հոդվածի (կամ միանման պաշարների խմբի) հաշվեկշռային արժեքը դրա վաճառքի զնի՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, հետ համեմատելու միջոցով: Եթե պաշարի հոդվածը (կամ միանման պաշարների խումբը) արժեզրկվել է, դրա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև վաճառքի զին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, իսկ արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի (կամ ակտիվների խմբի) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված գնահատականը (պաշարների դեպքում, վաճառքի զին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումներ), սակայն ոչ ավելի, քան այն գումարը, որը կորոշվեր, եթե նախորդ տարիներին ակտիվի (կամ ակտիվների խմբի) գծով ոչ մի արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

3.10 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

Վերագնահատման պահուստը ներառվում է հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներն ու վնասները:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.11 Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

3.12 Կապակցված կողմերի բացահայտումներ

Ընկերությունը հանդիսանում է պետության հետ կապակցված կազմակերպություն, քանի որ վերահսկվում է Հայաստանի Հանրապետության կողմից, որը հանդիսանում է Ընկերության միակ բաժնետերը: Ընկերությունը կիրառում է ՀՀՄՍ 24, Կապակցված կողմեր, ստանդարտի բացառումը պետության հետ կապված կապակցված կողմերի հետ գործարքների բացահայտման վերաբերյալ: Հետևաբար, ֆինանսական հաշվետվություններում բացահայտում է կապակցված կողմերի հետ գործարքի ազդեցությունը.
ա/ յուրաքանչյուր առանձին վերցրված նշանակալի գործարքի բնույթը և գումարը, և
բ/ մնացած գործարքների համար, որոնք նշանակալի են միասին վերցրած, բայց ոչ առանձին, դրանց չափերի վերաբերյալ քանակական և որակական տեղեկատվություն:

Ընկերությունը բացահայտում է առանցքային կառավարչական անձնակազմի.

- հատուցումները՝ կարճաժամկետ կամ հետաշխատանքային,
- ազատման նպաստները,
- մասնակցության վրա հիմնված վճարումները:

3.13 Հասույթի ճանաչում հաճախորդների հետ պայմանագրերից

Ընկերության հասույթն առաջանում է էլեկտրաէներգիայի ու բնական գազի վաճառքից և հզորության տրամադրումից, ինչպես նաև էլեկտրաէներգիայի և գազի փոխանակումից:

Կատարողական պարտականություն եւ հասույթի ճանաչման պահը

Ընկերության հասույթի մեծամասնությունը առաջանում է էլեկրաէներգիայի վաճառքից, որոնց գծով հասույթը ճանաչվում է վերահսկումը պատվիրատուին փոխանցելու պահին: Վերահսկման փոխանցումը հիմնականում տեղի ունի, երբ էլեկտրաէներգիան առաքվում է հաճախորդին: Վերահսկողության փոխանցման պահը որոշելու համար նման դեպքերում չի պահանջվում բարդ դատողություն: Երբ էլեկտրաէներգիան առաքվել է համաձայնեցված վայր, ապա դրանից հետո Ընկերությունը այլևս չունի տնօրինման իրավունք, սովորաբար ձեռք է բերում վճարման ստացման իրավունք:

Գործարքի գնի որոշում

Ընկերության հասույթները ստացվում են ֆիքսված գների պայմանագրերից եւ, հետեւաբար, յուրաքանչյուր պայմանագրից ստացված հասույթի գումարը որոշվում է այդ ֆիքսված գներով:

Գնի բաշխում կատարողական պարտականությունների վրա

Պայմանագրերի մեծ մասի դեպքում յուրաքանչյուր ապրանքի համար ֆիքսված է միավորի գինը:

Կիրառման բացառումներ

Ընկերությունն օգտվել է հետևյալ կիրառման բացառումներից.
- ֆինանսական բաղադրիչի չհաշվառում, եթե ապրանքի առաքման և գումարի ստացման միջև ժամանակահատվածը մեկ տարի կամ պակաս է, և
- պայմանագրի ձեռքբերման ծախսումները ճանաչվում են ծախս, եթե այլ կերպ ճանաչվելիք ակտիվի ամորտիզացիայի ժամկետը մեկ տարի կամ ավելի քիչ կլինի:

Ապրանքների փոխանակում
Երբ ապրանքները փոխանակվում են նույն բնույթի և արժեքի ապրանքներով և ծառայություններով փոխանակելու միջոցով, փոխանակումը չի դիտվում որպես հասույթ առաջացնող գործարք:
Երբ ապրանքները փոխանակվում են տարբեր բնույթի և արժեքի ապրանքներով և ծառայություններով փոխանակելու միջոցով, փոխանակումը դիտվում է որպես հասույթ

առաջացնող գործարք: Հասույթը չափվում է ստացված ապրանքների իրական արժեքով՝ ճշգրտված ցանկացած փոխանցված դրամական միջոցների և դրանց համարժեքների գումարով: Երբ ստացված ապրանքների իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, հասույթը չափվում է տրված ապրանքների իրական արժեքով՝ ճշգրտված ցանկացած փոխանցված դրամական միջոցների և դրանց համարժեքների գումարով:

3.14 Շահութահարկ

Շահույթի կամ վնասի զծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ հարկից և հետաձգված հարկից:
Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի զծով վճարման/ (փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ հարկը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս և ներառվում է տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթի կամ վնասի մեջ:
Ընկերության հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները եւ հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող եւ նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) եւ չօգտագործված հարկային կորուստի հետագա տարիներ փոխանցմամբ:
Ժամանակավոր տարբերությունների հետեւանքով առաջացած հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվեկշռային մեթոդով, հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար օգտագործված ակտիվների եւ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների եւ հարկման նպատակներով օգտագործված գումարների (հարկային բազայի) միջեւ ժամանակավոր տարբերությունների վրա:
Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների զծով այն չափով, որքանով հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

4. Նշանակալի դատողությունների, գնահատումներ և ենթադրություններ

4.1 Դատողություններ

Հետևյալները Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքանության կիրառման նպատակով ղեկավարության կողմից կատարված կարևոր դատողություններ են, որոնք էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա:

ա) Հասույթի ճանաչում – Պրինցիպալ թե՞ գործակալ (ծնթ. 12.զ)

4.2 Գնահատումներ և ենթադրություններ

Հետևյալները Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքանության կիրառման նպատակով ղեկավարության կողմից կատարված կարևոր գնահատումներ և ենթադրություններ են, որոնք էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա:

ա) Իրական արժեքի չափում – ծնթ. 5.դ և 22

Ընկերության ֆինանսական հաշվետվություններում ներառված որոշ ակտիվներ և պարտավորություններ պահանջում են չափումներ իրական արժեքով և/կամ իրական արժեքի բացահայտում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափումը հնարավորինս հիմնվում է դիտարկելի շուկայից ստացվող ելակետային տվյալների վրա: Իրական արժեքի չափումները սահմանելու համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող արդյունքները դիտարկելի («իրական արժեքի աստիճանակարգ»):

- *Մակարդակ 1. Նույն ակտիվների կամ պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված)*
- *Մակարդակ 2. Դիտարկելի ուղղակի կամ անուղղակի էլակետային տվյալներ, Մակարդակ 1-ի տվյալներից տարբեր*
- *Մակարդակ 3. Ոչ դիտարկելի էլակետային տվյալներ (հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա)*

Իրական արժեքների աստիճանակարգում այն մակարդակը, որին դասվում է իրական արժեքի չափումը, պետք է որոշվի ամենացածր մակարդակի էլակետային տվյալի հիման վրա, որը նշանակալի է ամբողջությամբ վերցրած իրական արժեքի չափման համար: Իրական արժեքի տեղափոխությունները մի մակարդակից դեպի մյուսը ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի են ունենում այդ տեղափոխությունները:

բ) Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ –ծնթ. 5.է.

Հիմնական միջոցների օգտակար գործողության ժամկետները գնահատվել են հիմնվելով ակտիվների ակնկալվող օտագործման առավել հավանական գնահատումներից, ինչպես նաև, նրանց գծով օգտարծման շարունակման մտադրվածությունից ելնելով: Ղեկավարությունը կարծում է, որ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները էականորեն չեն տարբերվում իրենց տնտեսական հնարավոր ժամկետներից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտագործման ժամկետները տարբերվեն առկա գնահատումներից, ապա դա կունենա էական ազդեցություն ֆինանսական հաշվետվությունների վրա:

գ) Դեբիտորական պարտքերի և այլ ֆինանսական ակտիվների արժեզրկում –ծնթ. 7

Ֆինանսական ակտիվների արժեզրկումը գնահատվում է պարբերաբար: 31.12.2019թ. դրությամբ, արժեզրկված դեբիտորական պարտքերի ընթացիկ արժեքը կազմում էր՝ 440,202 հազար դրամ (31.12.2018թ.՝ 442,327 հազար դրամ), իսկ այլ ֆինանսական ակտիվների գծով 219,234 հազար դրամ (31.12.2018թ.՝ 219,234 հազար դրամ): Ղեկավարությունը կատարում է դատողություններ հիմնվելով ապագա դրամական հոսքերում փոփոխությունները՝ գնահատելու արժեզրկումից կորուստը, երբ հաճախորդը կամ փոխառուն ունեն ֆինանսական դժվարություններ: Երբ, դեբիտորական պարտքերի և այլ ֆինանսական ակտիվների գծով փաստացի փոխհատուցումը տարբերվում է ակնկալիքից, ապա տվյալ ակտիվների ընթացիկ արժեքը փոխվում է:

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

դ) Պաշարների զուտ իրացվելի արժեքի գնահատում

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու անսաթվի դրությամբ դիտարկում է արդյոք պաշարների զուտ իրացվելի արժեքը պակաս չէ դրանց ձեռքբերման արժեքից և նման դեպքերի հայտնաբերման դեպքում պաշարները չափում է դրանց զուտ իրացվելի արժեքով: Գնահատումները հիմնվում են հետհաշվեկշռային ժամանակահատվածի ուսումնասիրության, ինչպես նաև մոտ ապագայում շուկայում ակնկալվող փոփոխությունների վերաբերյալ Խմբի ղեկավարության ակնկալիքների վրա:

5. Հիմնական միջոցներ

Հազար դրամ

	Շենքեր, շինություններ, կառուցվածքներ	Հողամասեր	Անավարտ կապիտալ շինարարություն	Փոխանցող հարմարանքներ	Ենթակայանի անավարտ շինարարություն	Տեղակայման ենթակա պահեստամասեր	Ջերմաէլեկտրակենտրոններ, սարքավորումներ	Տրանսպորտային միջոց	Արտադրական գույք և այլ Հ/Մ	Ընդամենը
Սկզբնական արժեք կամ վերագնահատված արժեք										
Առ 1 հունվարի 2018թ.	25,642,696	5,388,333	1,680,339	8,167,197	3,044,190	9,682,077	134,473,106	255,786	1,694,292	190,028,016
Ավելավումներ	19,425	-	-	3,862,935	-	-	4,618,574	60,349	13,139	8,574,422
Օտարումներ	-	-	-	-	-	-	(969,000)	(1,247)	-	(970,247)
Վերադասակարգում	(1,063,526)	-	-	6,318,482	(3,044,190)	(9,682,077)	7,475,375	-	(4,064)	-
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	24,598,595	5,388,333	1,680,339	18,348,614	-	-	145,598,055	314,888	1,703,367	197,632,191
Ավելավումներ	-	-	-	8,043	-	468,304	118,542	105	7,046	602,040
Նվազեցումներ	-	-	-	(25,223)	-		(483)	(2,720)		(28,426)
Վերադասակարգում	(481)	-	-	468,304	-	(468,304)	481	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	24,598,114	5,388,333	1,680,339	18,799,738	-	-	145,716,595	312,273	1,710,413	198,205,805
Կուտակված մաշվածություն,, վերագնահատման ազդեցություն, արժեզրկումից կորուստներ										
Առ 1 հունվարի 2018թ.	-	2,327,435	1,558,463	6,905,301	-	-	48,736,557	122,601	549,472	60,199,829
Ավելավումներ	3,573,857	-	-	138,909	-	-	2,984,178	14,442	103,840	6,815,226
Նվազեցումներ	-	-	-	-	-	-	-	(508)	-	(508)
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	3,573,857	2,327,435	1,558,463	7,044,210	-	-	51,720,735	136,535	653,312	67,014,547
Ավելացումներ	2,465,160	-	-	496,327	-	-	4,132,230	20,816	73,439	7,187,972
Նվազեցումներ	-	-	-	(828)	-	-	(151)	(284)	-	(1,263)
Վերադասակարգում	(37)	-	-	-	-	-	37	-	-	-
Արժեզրկման ազդեցություն	-	-	121,876	-	-	-	-	-	-	121,876
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	6,038,980	2,327,435	1,680,339	7,539,709	-	-	55,852,851	157,067	726,751	74,323,132
Հաշվեկշռային արժեք										
Առ 1 հունվարի 2018.	25,642,696	3,060,898	121,876	1,261,896	3,044,190	9,682,077	85,736,549	133,185	1,144,820	129,828,187
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	21,024,738	3,060,898	121,876	11,304,404	-	-	93,877,320	178,353	1,050,055	130,617,644
Առ 31 դեկտեմբերի 2019.	18,559,134	3,060,898	-	11,260,029	-	-	89,863,744	155,206	983,662	123,882,673

ա) Հիմնական միջոցների ավելացումներն իրենից ներկայացնում է՝

	Հազար դրամ
Կապիտալ շինարարություն	468,304
Կապիտալ նորոգում	113,231
Մատակարարներից գնված	12,462
Այլ մուտքեր	8,043
	602,040

Ընկերությունն իրականացնում է ՀՀ-ի և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) միջև 2015թ. ապրիլի 8-ին կնքված №8495-AM վարկային համաձայնագրի ներքո "Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման" շրջանակներում Երևանի ՋԷԿ-ի 220/110/35 կՎ ենթակայանի վերակառուցման ներդրումային ծրագիրը: Ծրագրի նպատակն է բարելավել և հզորացնել ՀՀ էլեկտրահաղորդման ցանցը:

Ծրագրի շրջանակներում վերակառուցվել է Երևանի ՋԷԿ-ի 220/110/35 կՎ էլեկտրական ենթակայանը, որը կառուցվել էր 1962թ.՝ աշխատելով ավելի քան 50 տարի, բարոյապես և ֆիզիկապես մաշված էր, ինչպես նաև վթարների քանակը շատ բարձր էր: Ենթակայանը միակ կապող օղակն էր համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի և էներգահամակարգի միջև, հետևապես ենթակայանի հուսալիությամբ էր պայմանավորված էներգաբլոկի անխափան աշխատանքը և արտադրված էլեկտրաէներգիայի անխափան հաղորդումը էներգահամակարգին:

Արդյունքում Ծրագրի իրականացումը նպաստել է ենթակայանում վթարային դեպքերի նվազեցմանը և էլեկտրահաղորդման ցանցի և համակարգի հուսալիության բարելավմանը:

Ֆինանսավորման աղբյուրներն են՝

- ՎԶՄԲ-ի կողմից տրամադրվող վարկային միջոցներ՝ 16,612,617 ԱՄՆ դոլար,
- ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ 4,175,538 ԱՄՆ դոլար:

Ծրագրի շրջանակներում ՀՀ պետբյուջեից նախատեսված համաֆինանսավորման գումարները Ընկերությանն են տրամադրվում որպես վարկ, որի մարումը նախատեսված է արտաքին աղբյուրներից ներգրավված վարկի մարմանը զուգահեռ:

բ) Ջերմաէլեկտրակենտրոններ

2010թ.-ին Ընկերությունում շահագործվում է նոր ջերմաէլեկտրակենտրոնը՝ 205 ՄՎտ անվանական հզորությամբ և 103 ԳԿալ/ժ ջերմության առաքմամբ (ծնթ. 1): 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ ջերմաէլեկտրակայանի ընթացիկ արժեքը՝ ներառյալ նրան առնչվող շենք-շինությունները, կազմում է 107,274,528 հազար դրամ է (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 111,809,248 հազար դրամ) (ներքո՝ դ.2. կետ):

2018թ.-ից շահագործվում է 220/110/35 կՎ ենթակայանը, որի հաշվեկշռային արժեքը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 9,229,701 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9,226,289) (ներքո՝ դ.2. կետ):

Հիմնական միջոցների մեջ ներառված է հին ջերմաէլեկտրակենտրոնը, որի հաշվեկշռային/վերագնահատված արժեքը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ներառյալ նրան առնչվող շենք-շինությունները, կազմում է՝ 4,317,546 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

6,521,209 հազար դրամ) (ներքո դ.1. կետ): Հին ջերմաէլեկտրակենտրոնի շահագործումը դադարեցվել է նոր էլեկտրակայանի շահագործումից հետո, և դիտարկվում է նրա օտարման տարբերակները:

գ) Հիմնական միջոցների գծով սահմանափակումներ

Բանկային վարկերը և փոխառություններն ապահովելու նպատակով Ընկերությունը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրել է 116,117,556 հազար դրամ ընդհանուր արժեքով հիմնական միջոցներ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10,376,438 հազար դրամի):

դ) Իրական արժեքի չափում - հիմնական միջոցների վերագնահատում

Ընկերության հողը և ենթակայանները չափվում են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատման ամսաթվով իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և հետագա կուտակված արժեզրկումը:

Ընկերության հողի և ենթակայանի իրական արժեքը գնահատումը վերջին անգամ իրականացվել է 31.12.2017թ.-ի դրությամբ: Այն իրականացվել է "Արթին Էներգիայս" ՍՊԸ-ի կողմից, ով Ընկերությունից անկախ գնահատող է: Գնահատող կազմակերպությունը և իր գնահատողները ունեն համապատասխան որակավորումներ (CIPS, CCIM, NAR) և հանդիսանում են գնահատողների միջազգային միությունների անդամ, մասնավորապես՝ ՌԳՄ (RVU, Russia).

Հողի իրական արժեքը որոշվել է շուկայի համեմատական մեթոդով, որը արտացոլում է նմանատիպ հողամասերի մոտ ժամանակներում վաճառքի գործարքները:

Շենքերի իրական արժեքը, որոնք շարունակվելու են օգտագործվել Ընկերության բնական գործունեությունում, մասնավորապես՝ 2010թ.-ին կառուցված նոր ենթակայանը, գնահատվել է կիրառելով ծախսային մեթոդը, որն արտացոլում է շուկայի մասնակցի կողմից նմանատիպ որակներով և տարիքի ակտիվի ձեռքբերման կամ կառուցման ծախսը՝ ճշգրտված հնացվածությամբ: Բացի տարիների մաշվածությունից, հնացվածությունը ներառում է ֆիզիկական, ֆունկցիոնալ (տեխնոլոգիական) և տնտեսական հնացվածությունը:

Հետագա օգտագործման համար նախատեսված սարքավորումների, մասնավորապես որոնք տեղադրված են նոր ջերմային էլեկտրակենտրոնում, իրական արժեքը գնահատվել է նմանատիպ սարքավորումների շուկայական արժեքի հիման վրա՝ ճշգրտելով հնացվածությունը:

Շենքերի ու սարքավորումների, որոնք պետք է ապամոնտաժվեն կամ օտարվեն, մասնավորապես՝ որոնք վերաբերում են 1963թ.-ին կառուցված հին ջերմաէներգոկենտրոնին, իրական արժեքը գնահատվել է իրացվող գույքի կամ ապամոնտաժումից առաջացող արժեքավոր նյութերի, եթե այդպիսիք կան, շուկայական արժեքից՝ հանած ապամոնտաժման և իրացման ծախսումները:

Իրենց յուրահատուկ բնույթից կախված, վերագնահատված հողամասի, շենքերի և *սարքավորումների իրական արժեքը դասակարգվել է իրական արժեքի աստիճանակարգի* 3-րդ մակարդակում:

Եթե հիմնական միջոցները ներկայացված լինեին սկզբնական արժեքով, ապա դրանց հաշվեկշռային արժեքները 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կկազմեին 114,848,164 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 120,882,920 հազար դրամ):

ե) Հին և նոր ջերմաէլեկտրակենտրոնների հիմնական միջոցները հետևյալն են.

Հազար դրամ

	Հաշվեկշռային արժեք	
	31.12.2019	31.12.2018
Հին ջերմաէլեկտրակենտրոն	6,887,524	9,091,187
Նոր ջերմաէլեկտրակենտրոն	116,995,149	121,526,457
	123,882,673	130,617,644

1) Հին ջերմաէլեկտրակենտրոն

Հազար դրամ

Հիմնական միջոցների խմբեր	31.12.2019թ.-ի դրությամբ			31.12.2018թ.-ի դրությամբ		
	Սկզբնական վերագնահատ-ված արժեք	Կուտակված մաշվածություն, արժեզրկումից կորուստներ	Հաշվեկշռային արժեք	Սկզբնական վերագնահատ-ված արժեք	Կուտակված մաշվածություն, արժեզրկումից կորուստներ	Հաշվեկշռային արժեք
Շենք, շինություններ, կառուցվածքներ	5,719,318	(4,663,685)	1,055,633	5,719,799	(2,863,243)	2,856,556
Փոխանցող հարմարանքներ	1,360,058	(195,484)	1,164,574	1,281,957	(97,620)	1,184,337
Մեքենաներ, սարքավորումներ	2,372,502	(453,196)	1,919,306	2,372,504	(230,828)	2,141,676
Տրանսպորտային միջոցներ	184,737	(32,000)	152,737	187,352	(12,701)	174,651
Արտադրական, տնտեսական գույք, այլ Հ/Մ	98,221	(72,925)	25,296	94,097	(51,984)	42,113
Անավարտ կապ. շինարարություն	1,680,339	(1,680,339)	-	1,680,339	(1,558,463)	121,876
	11,415,175	**(7,097,629)**	**4,317,546**	**11,336,048**	**(4,814,839)**	**6,521,209**
Հող	2,569,978	-	2,569,978	2,569,978	-	2,569,978
	13,985,153	***(7,097,629)***	***6,887,524***	***13,906,025***	***(4,814,839)***	***9,091,187***

2) Նոր ջերմաէլեկտրակենտրոն,

Հազար դրամ

Հիմնական միջոցների խմբեր	31.12.2019թ.-ի դրությամբ			31.12.2018թ.-ի դրությամբ		
	Սկզբնական վերագնահատ-ված արժեք	Կուտակված մաշվա-ծություն, արժեզրկու-մից կորուստներ	Հաշվեկշռային արժեք	Սկզբնական վերագնահատ ված արժեք	Կուտակված մաշվածություն, արժեզրկու-մից կորուստներ	Հաշվեկշռային արժեք
Շենք, շինություններ, կառուցվածքներ	18,890,587	(1,387,086)	17,503,501	18,890,587	(722,405)	18,168,182
Փոխանցող հարմարանքներ	921,801	(56,047)	865,754	921,801	(28,024)	893,777
Մեքենաներ, սարքավորումներ	94,607,536	(6,663,098)	87,944,438	94,488,994	(2,753,350)	91,735,644
Տրանսպորտային միջոցներ	4,935	(2,466)	2,469	4,935	(1,234)	3,701
Արտադրական, տնտեսական գույք, այլ Հ/Մ	1,299,524	(341,158)	958,366	1,296,604	(288,660)	1,007,944
	115,724,383	**(8,449,855)**	**107,274,528**	**115,602,921**	**(3,793,673)**	**111,809,248**
Նոր ենթակայան	9,612,579	(382,878)	9,229,701	9,239,556	(13,267)	9,226,289
Հող	490,920	-	490,920	490,920	-	490,920
	125,827,882	***(8,832,733)***	***116,995,149***	***125,333,396***	***(3,806,940)***	***121,526,457***

զ) Զրո հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցներ

31 դեկտեմբերի 2019թ. դրությամբ հիմնական միջոցների կազմում հաշվառվում են զրո հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցներ՝ 6,296,948 հազար դրամ (2018թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,765,772 հազար դրամ):

է) Հիմնական միջոցների մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակմամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետներն են՝

Շենքեր և շինություններ	20 - 40 տարի
Էներգոէլեկտրակենտրոններ	40 տարի
Փոխանցող հարմարանքներ	5 - 40 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	5 – 40 տարի
Տրանսպորտային միջոցներ	5 տարի
Արտադրատնտեսական գույք	5 – 40 տարի
Այլ հիմնական միջոցներ	2 – 10 տարի

Մաշվածության ծախսը վերագրվել է հետևյալ կերպ.

հազար դրամ

	2019թ.	2018թ.
Ինքնարժեքին վերագրվող (ծնթ.13)	4,825,096	3,324,950
Վարչական ծախսեր (ծնթ. 14)	253,134	311,305
Այլ գործառնական ծախսեր (ծնթ. 15)	2,109,742	3,178,971
	7,187,972	**6,815,226**

6. Պաշարներ

հազար դրամ

	31.12.2019	31.12.2018
Պահեստամասեր	5,002,716	4,879,835
Նյութեր	1,117,507	1,041,127
Վաճառքի համար մատչելի նյութեր	-	969,000
Շինարարական նյութեր	79,273	79,235
Այլ	86,750	94,927
	6,286,246	**7,064,124**

7. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

հազար դրամ

	31.12.2019	31.12.2018
Առևտրային դեբիտորական պարտքեր	5,413,165	5,907,657
Անհավաքելիության գծով պահուստ (գ)	(440,202)	(442,327)
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափով ֆինանսական ակտիվներ, բացառությամբ դրամական միջոցների	**4,972,963**	**5,465,330**
Տրված կանխավճարներ	121,290	118,452
Կասկածելի պարտքերի գծով պահուստ	(89,514)	(89,514)
Զուտ տրված կանխավճարներ	***31,776***	***28,938***
Հարկերի գծով	18,853	129,854
Հետաձգված հարկեր ԱԱՀ գծով	1,785,039	2,131,467
Այլ	209,120	131,737
Կասկածելի պարտքերի գծով պահուստ	(129,720)	(129,720)
	6,888,031	**7,757,606**

ա) Ամորտիզացված արժեքով դասակարգված առևտրային և այլ դեբիտորական պարտքերի իրական արժեքը էականորեն չի տարբերվում հաշվեկշռային արժեքից:

բ) Ընկերությունը առևտրային դեբիտորական պարտքերը ապահովված չեն գրավով կամ այլ երաշխիքներով:

գ) 31.12.2019թ.-ի դրությամբ 440,202 հազար դրամ առևտրային դեբիտորական պարտքերի (31.12.2018թ.-ի դրությամբ՝ 442,327 հազար դրամ) գծով ողջ ժամկետի համար գնահատված վճարունակության կորստի գումարը հավասար էր դեբիտորական պարտքի արժեքին: Հաշվետու ամսաթվի դրությամբ տվյալ ժամկետանց դեբիտորական պարտքերը վերաբերվում են "Արցախ էներգո" ՓԲԸ-ին: Ղեկավարության դիտարկմամբ նշված դեբիտորական պարտքի արժեզրկման հիմնական հայտանիշը այն է, որ հաճախորդը քիչ հավանական է որ կվճարի նշված պարտքերը որոշակի ժամկետի ընթացքում: Վճարումը ժամկետից 30 օր ուշացնելու դեպքում դեբիտորական պարտքերը համարվում են ժամկետանց: Նախորդ տարվա դրությամբ առկա ժամկետանց պարտքերը դեռևս չեն մարվել: Արժեզրկված դեբիտորական պարտքերի ժամկետայնությունը մեկ տարուց ավելի է:

8. Դրամական միջոցներ

հազար դրամ

	31.12.2019	31.12.2018
Բանկային հաշիվներ՝ ՀՀ դրամով	11,032,006	3,308,161
Բանկային հաշիվներ՝ արտարժույթով	683	606,169
Կանխիկ դրամական միջոցներ	2,954	217
	11,035,643	**3,914,547**

9. Սեփական կապիտալ

9.1 Բաժնետիրական կապիտալ

Հաշվետու տարում և նախորդ տարում Ընկերության բաժնետոմսերի քանակը անփոփոխ է՝ 2,273,147 հատ: Մեկ բաժնետոմսի գինը 31.12.2019թ. -ի դրությամբ սահմանվել է 815 դրամ է՝ համաձայն Ընկերության բաժնետիրական կապիտալի նվազեցման վերաբերյալ ՀՀ Կառավարության 09.08.2018թ.-ի N 884-Ա որոշման:
Մինչ այդ Ընկերության մեկ բաժնետոմսի գինը սահմանված էր 4,586 դրամ:

9.2 Էմիսիոն եկամուտ

հազար դրամ

	2019	2018
Տարեսկզբի մնացորդ	11,264,865	2,692,828
Էմիսիոն եկամտի ավելացում	-	8,572,037
Տարեվերջի մնացորդը	11,264,865	11,264,865

9.3 Պահուստային կապիտալ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի և Ընկերության կանոնադրության՝ Ընկերության բաշխման ենթակա շահույթը սահմանափակվում է չբաշխված շահույթի մնացորդով:

Համաձայն ՀՀ օրենսդրության՝ Ընկերությունը պետք է ստեղծի պահուստ իր կուտակված շահույթի հաշվին, որը հավասար կլինի բաժնետիրական կապիտալի առավելագույնը 15%-ին:

31.12.2019թ. դրությամբ Ընկերությունը չունի կուտակված շահույթ և հետևաբար չի ստեղծել պահուստային կապիտալ:

9.4 Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստը առաջացել է հիմնական միջոցների վերագնահատման արդյունքում (ծնթ 4.դ):

10. Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ

	Ընդամենը		Ընթացիկ մաս		Ոչ ընթացիկ մաս	
	31.12.2019թ.	31.12.2018թ.	31.12.2019թ.	31.12.2018թ.	31.12.2019թ.	31.12.2018թ.
Ապահովված վարկեր ֆինանսների նախարարությունից (բ)	116,817,033	120,368,154	5,107,377	5,307,241	111,709,671	115,060,876
Այլ փոխառություններ (չապահովված) (գ)	4,593,490	4,593,490	4,593,490	4,593,490	-	-
	121,410,523	124,961,644	9,700,867	9,900,731	111,709,671	115,060,876

ա) Որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ դասակարգված վարկերի և փոխառությունների իրական արժեքը հաշվեկշռային արժեքից էականորեն չի տարբերվում:

բ) Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում, 2005թ.-ի մարտի 29-ին ՀՀ կառավարության և Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալության (ՃՄՀԳ) միջև ստորագրվել է վարկային պայմանագիր «Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի (էներգաբլոկ) նախագծի» իրականացման վերաբերյալ: Նշված համաձայնագրի հիման վրա ՃՄՀԳ-ն ՀՀ կառավարությանը տրամադրել է զարգացման պետական աջակցության (ԶՊԱ) վարկ արտոնյալ պայմաններով՝ 0.75% տարեկան տոկոսադրույքով և 40 տարի մարման (որից 10 տարին արտոնյալ) ժամկետով՝ հատկացնելով 24,409,000 միլիոն ճապոնական իեն: 2005թ. մարտին ու 2016թ. հունիսին ենթավարկային պայմանագիր է կնքվել Ընկերության և Ֆինանսների նախարարության միջև՝ նույն պայմաններով:

ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ստացված վարկերը ապահոված են առաջինիս կողմից թողարկված հասարակ մուրհակներով:

գ) «Որոտան» ՀԷԿՀ-ից ստացված անտոկոս փոխառություններ, որոնցից 4,593,490 հազար դրամի չափով փոխառությունը փոխանցվել է Ընկերությանը՝ ցեսիայի պայմանագրի հիման վրա:

Ընկերության տոկոսային և արտարժութային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 18-ում:

10.1 Վարկերի և փոխառությունների պայմանները

հազար դրամ

Վարկատու	Արժույթ	Տոկոսը ըստ պայմանագրի	Մարման ժամկետ	31.12.2019	31.12.2018
Միջազգային համագործակցության Ճապոնիայի բանկ (ARM-P2)	Ճապ. իեն	0.75%	2045	97,231,564	100,745,740
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (8615-AM)	ԱՄՆ դոլար	Չօգտագործված մաս-0.25% 1.78%-2,91%	2040	9,550,675	9,365,034
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (8495-AM)	ԱՄՆ դոլար	Չօգտագործված մաս-0.25% 1.24%-2.91%	2039	8,024,193	8,206,646
8495-AM վարկի ՀՀ համաֆինանսավորում	ՀՀ դրամ	1.24%-2.91%	2039	2,010,616	2,050,697
				116,817,048	**120,368,117**

10.2 Վարկերի և փոխառությունների շարժը

հազար դրամ

Վարկեր	31.12.2018թ.	2019թ.-ի ընթացքում				31.12.2019թ.
		Տրամադրում	Տոկոսի հաշվեգրում	Փոխարժեքային տարբերություն	Մարում	
«Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի (էներգաբլոկի) նախագիծ (JICA, ARM-P2)»	100,745,740	-	742,749	290,327	(4,547,252)	97,231,564
«Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացում» (IBRD 8615-AM)	9,365,034	272,329	341,427	(77,086)	(351,029)	9,550,675
«Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» (IBRD 8495-AM)	8,206,646	-	301,960	(69,793)	(414,620)	8,024,193
«Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» (IBRD 8495-AM) Համաֆինանսավորում	2,050,697	113,820	70,636		(224,537)	2,010,616
Որոտան	4,593,490	-	-	-	-	4,593,490
Ընդամենը	**124,961,607**	**386,149**	**1,456,772**	**143,448**	**(5,537,438)**	**121,410,538**

11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

հազար դրամ

	31.12.2019	31.12.2018
Առևտրային կրեդիտորական պարտքեր	20,310,492	20,507,328
Այլ կրեդիտորական պարտքեր	3,500,000	3,500,000
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ, բացառությամբ վարկերի և փոխառությունների	23,810,492	24,007,328
Հաճախորդներից կանխավճարներ	-	68,000
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	51,043	121,483
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	16,829	12,044
Այլ	39,181	43,677
	23,917,545	24,252,532

Որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ դասակարգված առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի իրական արժեքը հաշվեկշռային արժեքից էականորեն չի տարբերվում:

12. Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Ընկերությունը հասույթը ներքո տարանջատել է խմբերի, որի նպատակն է արտացոլելու հասույթի բնույթը, գումարը, ժամկետայնությունը և անորոշությունները:

31.12.2019թ. ավարտված տարի

հազար դրամ

	Էլեկտրա-էներգիայի վաճառք (ա)	Հզորության տրամադրում (բ)	Բնական գազի վաճառք (գ)	Փոխհոսքերի գործարք՝ էլեկտրա-էներգիայի վաճառք (դ)	Ընդամենը
Աշխարհագրական բաշխվածություն					
ՀՀ տարածքում	18,944,044	12,139,788	13,371,725	-	44,455,557
Արտերկրում	28,393,759	-	-	2,125,956	30,519,715
	47,337,803	12,139,788	13,371,725	2,125,956	74,975,272

31.12.2018թ. ավարտված տարի

հազար դրամ

	Էլեկտրաէ-ներգիայի վաճառք	Հզորու-թյան տրամադ-րում	Բնական գազի վաճառք	Փոխհոսքերի գործարք՝ էլեկտրաէներգիայի վաճառք	Ընդամենը
	(ա)	(բ)	(գ)	(դ)	
Աշխարհագրական բաշխվածություն					
ՀՀ տարածքում	19,439,067	10,744,675	25,760,571	-	55,944,313
Արտերկրում	37,176,575	-	1,090,917	26,447	38,293,939
	56,615,642	10,744,675	26,851,488	26,447	94,238,252

ա) Էլեկտրաէներգիայի վաճառքից հասույթը ճանաչվում է ամսական հիմունքով՝ փաստացի փոխանցված էլեկտրաէներգիայի ծավալի հիման վրա:
Ընկերության կողմից իրացվող էլեկտրաէներգիայի սակագինը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Հանրային Ծառայությունների Կարգավորման Հանձնաժողովի կողմից:

Էլեկտրաէներգիայի սակագինը (առանց ԱԱՀ).

Կիրառման ամսաթիվը	դրամ/կՎտժ
01.08.2015	18.500
01.08.2016	17.767
01.02.2017	15.460
01.02.2018	20.284
01.02.2019	17.015
01.02.2020	16.144

բ) Հզորության տրամադրումից հասույթը ստացվում է կայանի պարապուրդի ժամանակ և ճանաչվում է ամսական կտրվածքով՝ պարապուրդի ժամերի հիման վրա:
Հզորության տրամադրման սակագինը (առանց ԱԱՀ).

Կիրառման ամսաթիվը	դրամ/կՎտժ.ամիս
01.08.2015	3,564.11
01.08.2016	4,707.83
01.02.2017	5,102.30
01.02.2018	4,950.62
01.02.2019	4,656.47
01.02.2020	4,604.67

գ) Բնական գազի վաճառքից հասույթը ճանաչվում է ամսական կտրվածքով՝ փաստացի փոխանցված ծավալի հիման վրա:

Համաձայն պայմանագրի Երևան ՋԷԿ-ը ձեռք է բերում գազ, որի դիմաց մատակարարին տրամադրում է էլեկտրաէներգիա՝ կիրառելով համապատասխան գործակից:

Միևնույն ժամանակ, Ընկերությունը գազի մի մասը նույն կետում հանձնում է Երրորդ կազմակերպության, մնացած մասը օգտագործվում է էլեկտրաէներգիայի արտադրության համար: Երրորդ կողմը ստացված գազի դիմաց՝ Ընկերությանը նույն կետում տրամադրում է էլեկրաէներգիա՝ պայմանագրով սահմանված մեկ այլ գործակցով, որն Ընկերությունը իր հերթին ամբողջությամբ փոխանցվում է գազի մատակարարին:

Ընկերության ղեկավարությունը կատարել է հիմնավորված դատողություններ, որոշելու համար՝ արդյո՞ք տվյալ հանգամանքում Ընկերությունը ՖՀՍՄ-ների պահանջների առումով հանդիսանում է պրինցիպալ թե գործակալ:

Հաշվի առնելով, որ Ընկերությունը հանդիսանում է հիմնական պատասխանատու պայմանագրի կատարման, պայմանագրի հարցերի լուծման և մատակարարված ապրանքի որակի ու համապատասխանության համար, Ընկերության ղեկավարությունը համարել է, որ Ընկերությունը տվյալ գործարքների շրջանակում հանդիսանում է պրինցիպալ կողմ, ուստի հասույթը ճանաչել է համախառն հիմունքով:

13. Վաճառքի ինքնարժեք

հազար դրամ

	2019	2018
Արտադրությունում օգտագործված գազի և այլ նյութերի ինքնարժեք	29,616,547	26,967,086
Վաճառված գազի ինքնարժեք	13,376,050	27,148,755
Վաճառված էլեկտրաէներգիայի ինքնարժեք	17,875,740	27,250,452
Մաշվածության և ամորտիզացիոն ծախսեր	4,825,096	3,324,950
Էներգիայի և գազի տեղափոխման ծառայություններ	2,656,642	1,898,311
Փոխհատուցում աշխատակիցներին	439,717	475,836
	68,789,792	**87,065,390**

31.12.2019թ. ավարտված տարի

	Էլեկտրաէներգիայի վաճառք ՀՀ տարածքում	Էլեկտրաէներգիայի արտահանում	Բնական գազի վաճառք ՀՀ տարածքում	Բնական գազի արտահանում	Ընդամենը
Արտադրությունում օգտագործված գազի և այլ նյութերի ինքնարժեք	19,366,042	10,250,505	-	-	29,616,547
Վաճառված գազի ինքնարժեք	-	-	13,376,050	-	13,376,050
Վաճառված էլեկտրաէներգիայի ինքնարժեք	1,408,566	16,467,174	-	-	17,875,740
Մաշվածության և ամորտիզացիոն ծախսեր	3,155,095	1,670,001	-	-	4,825,096
Էներգիայի և գազի տեղափոխման ծառայություններ	1,737,159	919,483	-	-	2,656,642
Փոխհատուցում աշխատակիցներին	287,528	152,189	-		439,717
	25,954,390	**29,459,352**	**13,376,050**	-	**68,789,792**

31.12.2018թ. ավարտված տարի

	Էլեկտրաէներգիայի վաճառք ՀՀ տարածքում	Էլեկտրաէներգիայի արտահանում	Բնական գազի վաճառք ՀՀ տարածքում	Բնական գազի արտահանում	Ընդամենը
Արտադրությունում օգտագործված գազի և այլ նյութերի ինքնարժեք	18,823,402	8,143,684	-		26,967,086
Վաճառված գազի ինքնարժեք	-	-	25,828,277	1,320,478	27,148,755
Վաճառված էլեկտրաէներգիայի ինքնարժեք	500,503	26,749,949	-	-	27,250,452
Մաշվածության և ամորտիզացիոն ծախսեր	2,320,861	1,004,089	-	-	3,324,950
Էներգիայի և գազի տեղափոխման ծառայություններ	1,325,048	573,263	-	-	1,898,311
Փոխհատուցում աշխատակիցներին	332,140	143,696	-	-	475,836
	23,301,954	36,614,681	25,828,277	1,320,478	87,065,390

14. Վարչական ծախսեր

Հազար դրամ

	2019	2018
Փոխհատուցում աշխատակիցներին	273,399	312,505
Աուդիտի և խորհրդատվության ծախսեր	44,829	74,612
Չփոխհատուցվող հարկեր և պարտավորություններ	120,453	116,125
Մաշվածության գծով ծախսեր	258,626	317,390
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	37,644	39,797
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	4,389	21,851
Բանկային ծախսեր	1,986	2,964
Այլ	14,463	26,736
	755,789	**911,980**

15 Այլ ծախսեր

հազար դրամ

	2019	2018
Մաշվածություն	2,109,742	3,178,971
Տուգանքներ և տույժեր	12,761	251
Պահակային ծառայության գծով ծախսեր	130,355	130,355
Պաշարների օտարումից, դուրսգրումից	7,025	5,447
Արտարժույթի փոխանակումից ծախսեր	3,136	38,972
Վերազնահատողի ծառայության վճար	-	17,749
Հնարավոր շահութահարկի գծով պահուստ	93,120	12,983
Այլ	13,499	15,975
	2,369,638	**3,400,703**

16. Շահութահարկ

Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Հաշվետու տարվա համար ՀՀ հարկային օրենսգրքով շահութահարկի դրույքաչափը սահմանված է 20% (2018թ.-20%): 2020թ.-ից շահութահարկի դրույքաչափը սահմանվել է 18%:

Հազար դրամ

	2019	2018
Ընթացիկ հարկի գծով ծախս	241,458	-
Հետաձգված հարկի գծով ծախս	1,069,676	1,019,002
	1,311,134	**1,019,002**

Շահութահարկի արդյունավետ տոկոսադրույքի համադրում

	2019		2018	
	Հազ. դրամ	%	Հազ. դրամ	%
Շահույթ մինչև հարկումը	**2,573,221**		**1,059,862**	
Շահութահարկ սահմանված դրույքաչափով	514,644	20.00	211,972	20.00
Արտարժութային կորստի հետևանք	4,087	0.20	381,422	36.00
Ֆինանսական ակտիվների արժեզրկման հարկային հետևանք	206,633	8.00	-	-
Հիմնական միջոցներ	446,324	17.00	571,918	54.00
Ակտիվիվներին վերաբերող շնորհից եկամուտ	(21)	(0.01)	(116,340)	(11.00)
Այնվազեցվող ծախսեր/(չհարկվող եկամուտներ), զուտ	139,467	5.40	(29,970)	(3.00)
Շահութահարկի գծով ծախսը/(փոխհատուցումը) և արդյունավետ տոկոսադրույքը	**1,311,134**	**51.00**	**1,019,002**	**96.00**

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հազար դրամ

	31.12.2019	31.12.2018
Տարեսկզբի մնացորդ	1,745,289	2,764,291
Շահույթում կամ վնասում ճանաչված	(1,069,676)	(1,019,002)
Սեփական կապիտալում ճանաչված	-	-
Տարեվերջի մնացորդ	675,613	1,745,289

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվել են հարկային վնասների և ժամանակավոր տարբերությունների այն չափով, որքանով Ընկերության ղեկավարությունը ակնկալում է, որ դրանք փոխհատուցելի են:

Հետաձգված հարկերի մնացորդների շարժը տարվա ընթացքում

	2019թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	2019թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ				
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	2,211,138	(153,557)	-	2,057,581
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	132,312	(53,076)	-	79,236
Պաշարների գծով արժեզրկում	-	-	-	-
Հարկային վնաս	1,001,403	(1,001,403)	-	-
Աշխատավարձի գծով պահուստ	8,736	(1,683)	-	7,053
	3,353,589	**(1,209,719)**	**-**	**2,143,870**
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	(1,608,300)	140,043	-	(1,468,257)
	(1,608,300)	**140,043**	**-**	**(1,468,257)**
Զուտ արդյունք-հետաձգված հարկային ակտիվներ	**1,745,289**	**(1,069,676)**	**-**	**675,613**

	2018թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	2018թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ				
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	2,242,192	(31,054)	-	2,211,138
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	99,369	32,943	-	132,312
Առևտրային և այլ կրեդիտ. պարտքեր	26,196	(26,196)	-	
Պաշարների գծով արժեզրկում	-		-	
Հարկային վնաս	2,156,945	(1,155,542)	-	1,001,403
Աշխատավարձի գծով պահուստ	1,036	7,700	-	8,736
	4,525,738	(1,172,149)	-	3,353,589
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	(1,761,447)	153,147		(1,608,300)
	(1,761,447)	(153,147)	-	(1,608,300)
Զուտ արդյունք-հետաձգված հարկային ակտիվներ	2,764,291	(1,019,002)	-	1,745,289

17. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընկերության 100% բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետության կառավարությանը, հետևաբար Ընկերության կապակցված կողմեր են համարվում բոլոր պետական ձեռնարկությունները: Ընկերության կապակցված կողմերը ներառում է նաև հիմնական ղեկավար անձնակազմը:

17.1 Վերահսկություն

Ընկերությունը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, ի դեմս ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության:

17.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության կապակցված կողմերի միջև իրականացրել են հետևյալ գործարքները և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են.

	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Բաժնետերեր		
Տոկոսային ծախսի հաշվեգրում	1,456,772	1,284,627
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ծառայությունների ձեռք բերում	1,981,900	2,964,688
Ապրանքների ձեռք բերում	751,321	-

	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր և փոխառություններ ՀՀ ֆինանսների նախարարությունից (ծնթ. 10)	116,817,048	120,368,117
Այլ փոխառություններ (ծնթ. 10)	4,593,490	4,593,490
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,559,878	1,151,111
Այլ կրեդիտորական պարտքեր	3,500,000	3,500,000

17.3 Առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումներ

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմին տրված հատուցումները հետևյալն են.

հազար դրամ

	2019	2018
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ փոխհատուցումներ	18,437	18,030
	18,437	18,030

18. Ֆինանսական գործիքներից բխող ռիսկեր

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Այլ գնային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր,
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
- Առևտրային կրեդիտորական պարտքեր:
- Վարկեր և փոխառություններ

(բ) Ֆինանսական գործիքներ կատեգորիաներով

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին.

Ֆինանսական ակտիվներ

հազար դրամ

	Ծնթ.	2019	2018
Ամորտիզացված արժեքով չափվող			
Առևտրային դեբիտորական պարտքեր	7	4,972,963	5,465,330
Դրամական միջոցներ բանկերում	8	11,032,689	3,914,330
Ընդամենը		**16,005,652**	**9,379,660**

Ֆինանսական պարտավորություններ

հազար դրամ

	Ծնթ.	2019	2018
Ամորտիզացված արժեքով չափվող			
Վարկեր և փոխառություններ	10	121,410,538	124,961,607
Առևտրային կրեդիտորական պարտքեր	11	20,310,492	20,507,328
Ընդամենը		**141,721,030**	**145,468,935**

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը, վարկերն ու փոխառությունները, առևտրային կրեդիտորական պարտքերը:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների, առևտրային դեբիտորական պարտքերի, վարկերի ու փոխառությունների, առևտրային կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Ընկերության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

18.1. Շուկայական ռիսկ

Գնային ռիսկ

Գնային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են շուկայական գների փոփոխության արդյունքում (բացի տոկոսադրույքային և արժութային ռիսկերից առաջացողներից): Ղեկավարությունը գնահատում է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը էականորեն չի տարբերվում նրանց ընթացիկ արժեքից:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն այն ռիսկն է, երբ գործընկերների կողմից Ընկերության նկատմամբ իրենց պարտավորությունների չկատարելու արդյունքում Ընկերությունը կարող է կրել ֆինանսական կորուստներ: Այս ռիսկի ազդեցությունը Ընկերության համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, տրամադրված փոխառությունները, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլն: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքով:

Ընկերության առևտրային դեբիտորական պարտքերը հիմնականում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից են: Այս դեբիտորական պարտքերի համար պարտքային ռիսկն ընդունելի է:
Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ժամկետայնության և անհավաքելիության ռիսկի վերաբերյալ տեղեկությունը ներկայացված է ծնթ. 7 –ում:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների մասով պարտքային ռիսկն ընդունելի է, քանի որ պայմանագրային գործընկերները հեղինակավոր բանկեր են:

Արժութային ռիսկ

Արժութային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով:
Ընկերության գործարքների հիմնական մասը իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն մեծամասամբ առաջանում է Ընկերության ստացված վարկերից և փոխառություններից, որոնք, ի սկզբանե արտահայտված են ճապոնական ենով, ԱՄՆ դոլարով և եվրոյով:

31.12.2019թ.-ի դրությամբ արտարժույթով արտահայտված ակտիվները/(պարտավորությունները) հետևյալն են.

Արտարժույթով հոդվածներ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ճապոնական Ին	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ	-	683	-	683
Առևտրային դեբիտորական պարտքեր	179,737	-	28,508	208,245
	179,737	683	28,508	208,928
Ֆինանսական պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	17,574,867	-	97,231,565	114,806,432
Կրեդիտորական պարտքեր	27,900	7,718,	-	35,618
	17,602,767	7,718	97,231,565	114,842,050
Զուտ արդյունք	(17,423,030)	(7,035)	(97,203,057)	(114,633,122)

31.12.2018թ.-ի դրությամբ արտարժույթով արտահայտված ակտիվները/(պարտավորությունները) հետևյալն են.

Արտարժույթով հոդվածներ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ճապոնական Իեն	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ	605,996	173	-	606,169
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,907,259	9	2,288	1,909,556
	2,513,255	182	2,288	2,515,725
Ֆինանսական պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	17,571,680	-	100,745,739	118,317,419
Կրեդիտորական պարտքեր	159,360	1,075,237	-	1,234,597
	17,731,040	1,075,237	100,745,739	119,552,016
Զուտ արդյունք	(15,217,785)	(1,075,055)	(100,743,451)	(117,036,291)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ նշված արտարժույթերի նկատմամբ դրամի 5% աճին/նվազմանը: 5%-ը ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 5%-ով: 31.12.2019թ.-ի դրությամբ, ՀՀ դրամի արժեզրկումը նշված արտարժույթների նկատմամբ 5%-ով կունենա հետևյալ ազդեցությունը.

	ԱՄՆ դոլարի ազդեցություն	Եվրոյի ազդեցություն	Իենի ազդեցություն	Ընդամենը
	Հազար դրամ	Հազար դրամ	Հազար դրամ	Հազար դրամ
Օգուտ/ (կորուստ)	(871,151)	(352)	(4,860,153)	(5,731,656)

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

ԱՄՆ դոլարի, Եվրոյի Իենի նկատմամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված են հետևյալ հաշվարկային փոխարժեքները.

	31.12.2019	31.12.2018	Դրամի արժևորում/ (արժեզրկում)
	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	
1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը	479.70	483.75	0.84%
1 Եվրոյի փոխարժեքը	537,26	553.65	2.96%
1 Ճապոնական իենի փոխարժեքը	43,96	43.83	(0.3)%

18.2. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, երբ Ընկերությունը դժվարություններ է ունենում այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են՝ դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելով:
Ընկերության ղեկավարությունը շարունակական մոնիտորինգ է իրականացնում Ընկերության իրացվելիության գծով՝ ապահովելու համար գործառնական գործունեության համար անհրաժեշտ դրամական միջոցների առկայությունը:
Ընկերությունը չունի ածանցյալ ֆինանսական պարտավորություններ: Հետևյալ աղյուսակը վերլուծում է Ընկերության ոչ-ածանցյալ ֆինանսական պարտավորությունները, որոնք խմբավորվել են ըստ մարման ժամկետայնության՝ հաշվետվության օրվանից հետո:

	Մարման ժամկետները			
	մինչև 6 ամիս	6-12 ամիս	1 -5 տարի	5 տարի և ավելի
Կրեդիտորական պարտքեր	718,679	-	19,591,813	-
Վարկեր և փոխառություններ	4,593,490	5,107,377	-	111,709,671
Ընդամենը	**5,312,169**	**5,107,377**	**19,591,813**	**111,709,671**

19. Պայմանական ակտիվներ և պարտավորություններ

19.1 Ապահովագրություն

Ընկերությունը ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ Ընկերության գործունեության հետևանքով:

19.2 Պայմանական պարտավորություններ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվը՝ Ընկերության դեմ հարուցված դատական հայցեր չկան:

19.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի:
Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

20. Կապիտալի կառավարում

Ընկերությունը իր կապիտալը կառավարում է՝ ապահովելու համար Ընկերության շարունակական գործունեությունը և մասնակիցների շահույթը:
Ընկերության կապիտալի կառուցվածքը ներառում է փոխառու միջոցները (ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններ) և սեփական կապիտալը (ներառող կանոնադրական կապիտալը, պահուստները և կուտակված շահույթը):

Ընկերության՝ որպես կապիտալ կառավարվող գումարները հաշվետու տարվա համար ամփոփված են ստորև.

Հազար դրամ

	2019թ.	2018թ.
Փոխառություններ	121,410,538	124,961,607
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(11,035,643)	(3,914,547)
Զուտ պարտք	**110,374,895**	**121,047,060**
Ընդհանուր սեփական կապիտալ	**3,157,023**	**1,894,936**
Կապիտալ/Պարտք գործակից	**2.9%**	**1.6%**

21. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

2020 թվականի հունվարի 30-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը («ԱՀԿ») հայտարարեց առողջապահական գլոբալ արտակարգ իրավիճակ Չինաստանի Վուհան քաղաքում ծագած կորոնավիրուսի նոր շտամի պատճառով («COVID-19 բռնկում»), ինչպես նաև նշեց միջազգային հանրության համար առկա ռիսկի մասին, քանի որ վիրուսը տարածվում է ողջ աշխարհում իր ծագման վայրից դուրս: 2020 թվականի մարտին ԱՀԿ-ն COVID-19-ի բռնկումը որակեց որպես համաճարակ (պանդեմիա)՝ հիմնվելով դրա համաշխարհային ազդեցության արագ աճի վրա:

COVID-19-ի բռնկման ամբողջ ազդեցությունը շարունակում է զարգանալ սույն հաշվետվության ամսաթվի դրությամբ: Որպես այդպիսին, անորոշ է, թե ինչ մասշտաբի ազդեցություն կունենա պանդեմիան Ընկերության ֆինանսական վիճակի, իրացվելիության և գործունեության հետագա արդյունքների վրա: Ղեկավարությունն ակտիվորեն հետևում է համաշխարհային իրավիճակի ազդեցությանն իր ֆինանսական վիճակի, իրացվելիության, գործառնությունների, հաճախորդների, գործունեության ոլորտի և աշխատուժի վրա: Հաշվի առնելով COVID-19 բռնկման ամենօրյա զարգացումները և դրա տարածման սահմանափակմանն ուղղված համաշխարհային գործողությունները՝ Ընկերությունն ի վիճակի չէ գնահատել COVID-19-ի բռնկման ազդեցությունն իր գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի կամ իրացվելիության վրա 2020 ֆինանսական տարվա համար:

COVID-19-ի տարածմամբ պայմանավորված նվազումներ են նկատվում արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի թողարկման ծավալներում: Ինչպես նաև, քանի որ մարդիկ խուսափում են հանրային վայրերում գտնվելուց, նվազեցումներ են նկատվում նաև ծառայությունների ոլորտում: Նշված տնտեսության ակտիվության նվազման արդյունքում կարող է նվազել նաև էլեկտրաէներգիայի պահանջարկը և ներքին և արտաքին շուկաներում:

Չնայած Ընկերությունն այս պահին չի կարող գնահատել COVID-19-ի բռնկման ազդեցության տևողությունը կամ ծանրությունը, եթե համաճարակը շարունակվի, ապա դա կարող է էական ազդեցություն թողնել Ընկերության 2020 ֆինանսական տարվա հետագա գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի և իրացվելիության վրա:

22. Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք հազ. դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Վարկեր և փոխառություններ	121,410,538	*Ընթացիկ* Փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային դեբիտորական պարտքեր	4,972,963	*Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	20,310,492	*Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ